

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ.

N \_\_\_\_ -Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐԻ ԱՆՎԱՍԲ**  
**ԶԲՈՍԱՅԳԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գլխավոր պողոտայի՝ Սարյանի, Բուզանդի, Կարեն Դեմիրճյանի փողոցների և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի զբոսայգին անվանակոչել հայ նշանավոր հասարակական գործիչ, գրող և հրապարակախոս, հայկական հարցի մասին մի շարք գրքերի հեղինակ, Ճապոնիայում Հայաստանի առաջին Հանրապետության պատվավոր հյուպատոս, աշխարհում հյուպատոս նշանակված առաջին կին, բարեգործ Դիանա Աբգարի անվամբ՝ «Դիանա Աբգարի անվան զբոսայգի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Գ. ԵՐԻՑՅԱՆ**  
**Գ. ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐԻ ԱՆՎԱՍԲ ԶԲՈՍԱՅԳԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Դիանա Աբգարը եղել է հայ հասարակական գործիչ, գրող, բարեգործ և աշխարհում առաջին կինը, որ նշանակվել է պատվավոր հյուպատոս: 2019 թվականի հոկտեմբերի 17-ին լրանում է Դիանա Աբգարի 160-ամյակը:

Դիանա Աբգարը (ծննդյան անունը՝ Գայանա, օրիորդական ազգանունը՝ Աղաբեկ (Աղաբեկյան)), ծնվել է պարսկահայերի ընտանիքում՝ Բիրսայի (Մյանմա) այն ժամանակվա մայրաքաղաք Ռանգունում (այժմ՝ Յանգոն): 1890 թվականից մինչև մահը բնակվել է Ճապոնիայում:

1906 թվականին՝ ամուսնու մահից հետո Դիանան ստանձնել է նրա առևտրային ընկերությունների կառավարումը, ինչն արել է մեծ հմտությամբ: 1909 թվականի Ադանայի կոտորածը Դիանա Աբգարին մղել է դեպի հանրային, գրական և հրապարակախոսական ակտիվ գործունեություն, որի առանցքում հայերի դժվարին կացությունը և հայկական հարցն էին: Այդ ժամանակից ի վեր նա իր հետագա կյանքի ողջ գործունեությունը նվիրել է իր պատմական հայրենիքին և հայ ժողովրդին:

Դիանա Աբգարն առաջիններից մեկն էր, որ ապացուցեց, որ Ադանայի կոտորածը կազմակերպվել և իրականացվել էր թուրքական իշխանությունների կողմից: Նա հանդես է եկել հայ ժողովրդին նվիրված դասախոսություններով, հոդվածներով, աշխատակցել է «The Japan Gazette» և «Far East» անգլերեն պարբերականներին, երբեմն նաև «New York Times»-ին: Դիանա Աբգարը բեղմնավոր գրչի տեր էր: Նա գրում էր Օսմանյան կայսրությունում հայերի կյանքի ծայրահեղ պայմանների մասին՝ ընդգծելով հայերին փրկելու Արևմուտքի բարոյական պարտականությունը: Նրա անգլերեն հեղինակած գրքերից են «Ճշմարտությունը հայության ջարդերի մասին» (1910), «Հայերի հարցը», «Դավաճանված Հայաստան» (1912), «Նրա անունով» (1911), «Եվրոպայի խաղաղությունը», «Խաղաղության խնդիրը» (1912), «Մեծ չարիք» (1914) և այլն: Նրա վերջին գիրքը եղել է «Եվրոպական իմպերիալիզմի խաչին խաչված Հայաստանը» (1918):

Նա հրատարակել է նաև բազմաթիվ պամֆլետներ և հոդվածներ ակադեմիական, քաղաքական և առևտրային պարբերական հրատարակչություններում, կատարել ժամանակի հանրահայտ «Թայմս», «Ֆիգարո» և այլ թերթերի ու ամսագրերի պատվերները՝ գրելով հոդվածներ Արևելքի երկրների տնտեսության վերաբերյալ:

Դիանա Աբգարը նաև բանաստեղծություններ է գրել, որոնք լույս են տեսել եվրոպական ու ամերիկյան մամուլում:

2002 թվականին ԱՄՆ-ում նրա թոռնուհին՝ Լուսիլ Աբգարը, կազմել և հրատարակել է Դիանա Աբգարի հեղինակած պատմվածքների «Հազար ու մի պատմվածքների գրքից» պատմություններ Հայաստանի ու նրա ժողովրդի մասին՝ ժողովածուն:

Դիանա Աբգարն իր ժամանակի համար բացառիկ կարդացած, աշխարհաքաղաքական իրավիճակին գերազանց տիրապետող, խիզախորեն իր տեսակետն արտահայտող հազվագյուտ և ուժեղ կանանցից է եղել, ով լավատեղյակ էր ինչպես հայ ժողովրդի ծանր վիճակի, այնպես էլ եվրոպական երկրներից տրվող օգնության պակասի մասին: 1915 թվականի կեսերից սկսած իր կրթությամբ ու հայրենասիրությամբ մեծ համբավ ու հեղինակություն վայելող Դիանան ամեն կերպ օգնել է բազմաթիվ հայ գաղթականների, ովքեր Սիբիրի և Ճապոնիայի վրայով փորձում էին անցնել ԱՄՆ: Նա վճարել է փախստականների ճանապարհածախսը և հոգացել նրանց ֆինանսական կարիքները իր սեփական, ինչպես նաև հանգանակած միջոցներից, նրանց ժամանակավոր ապաստարան տվել իր տանը, ճապոնական իշխանությունների և եվրոպացի հյուպատոսների մոտ վայելած մեծ հեղինակության և վստահության շնորհիվ լուծել նրանց անցաթղթերի հարցը, հանդես եկել որպես նրանց հովանավոր: Ըստ տարբեր հետազոտողների՝ Դիանա Աբգարի անձնական հովանավորության շնորհիվ 1915-1930 թվականներին ապաստան ստացածների թիվը տատանվում է 600-1500 միջև:

Փորձելով օգնել իր ժողովրդին՝ Դիանա Աբգարը մշտական նամակագրական կապի մեջ է եղել որոշ քաղաքական գործիչների, իրավապաշտպանների և ազդեցիկ անձանց հետ, որոնցից էր, օրինակ, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը: Նա իր նամակներով շարունակ բարձրաձայնել է հայերին սպառնացող նոր ջարդերի վտանգի մասին, փորձել ուշադրություն հրավիրել հայ ժողովրդի դժվարին կացության վրա և փնտրել օգնության ուղիներ:

1919 թվականին Դիանան մասնակցել է Խարբինում (Չինաստան) կայացած Միբիրի և Ծայրագույն Արևելքի հայերի համաժողովին, որտեղ նրան ընտրել են պատվավոր նախագահ:

1920 թվականի հուլիսին Դիանա Աբգարը նշանակվել է Հայաստանի առաջին Հանրապետության պատվավոր հյուպատոս Ճապոնիայում: Պահպանվել է Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ և արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանի նամակը Դիանա Աբգարին՝ վերջինիս պատվավոր հյուպատոս նշանակելու մասին: Նամակում Օհանջանյանը շնորհակալություն է հայտնում նրանից Ծայրագույն Արևելքում նորածին հայրենիքի շահերը պաշտպանելու և հայրենակիցների ծանր վիճակը թեթևացնելու համար: Նա նաև արձանագրում է, որ այդ հեռու վայրերում տեղացիների և հայերի շրջանում ոչ ոք չի վայելում այնքան մեծ հեղինակություն, որքան Դիանա Աբգարը: Դիանա Աբգարի հովանավորությունն են վայելել նաև Մինգապուրի և Ինդոնեզիայի հայերը:

Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, ըստ արժանվույն գնահատելով Աբգարի գործունեությունը, 1926-ին նրան արժանացրել է հատուկ կոնդակի՝ հայ ժողովրդի շահերին ծառայելու և դժվար պահերին նրա կողքին լինելու համար:

Դիանա Աբգարն ունեցել է հինգ զավակ, որոնցից երկուսը մահացել են մանուկ հասակում: Նրա սերունդները տեղափոխվել են ԱՄՆ և մինչ օրս բնակվում են այնտեղ:

Հաշվի առնելով վերոգրյալը և Դիանա Աբգարի 160-ամյակի կապակցությամբ նրա հիշատակը հավերժացնելու նպատակով՝ առաջարկում ենք Գլխավոր պողոտայի Մաշտոցի պողոտայից դեպի Սարյան փողոց ձգվող հատվածի զբոսայգին անվանել Դիանա Աբգարի անունով: Այսպիսով վառ կպահվի իր ողջ հանրային գործունեությունը հայ ժողովրդին նվիրած, բայց անարդար կերպով անտեսված հայ կին գործչի, գրողի, հրապարակախոսի և բարեգործի հիշատակն ու ավանդը:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանում հայ կին գործիչների հիշատակումը մեծապես զիջում է տղամարդկանց նվիրված հուշարձաններին, փողոցներին և այլ աշխարհագրական օբյեկտներին, կարևոր ենք համարում այս քայլը՝ որպես տարբեր ոլորտներում նշանակալի ավանդ ունեցող կանանց արժևորման, նրանց անվան ու գործի հանրահռչակման և այդպիսով հետհեղափոխական Հայաստանում նոր մշակույթի հաստատման նախաձեռնություն: Հետագայում զբոսայգում կարելի է հուշարձան կանգնեցնել՝ նվիրված Դիանա Աբգարին կամ ընդհանրապես հայ կին գործիչներին ու մտավորականներին, և տարածքը վերածել գրական ու քաղաքական քննարկումների և միջոցառումների հարթակի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Գ. ԵՐԻՑՅԱՆ**  
**Գ. ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐԻ ԱՆՎԱՍԲ ԶԲՈՍԱՅԳԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՍԲ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում Դիանա Աբգարի անվամբ զբոսայգի անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Գ. ԵՐԻՑՅԱՆ  
Գ. ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐԻ ԱՆՎԱՍԲ ԶԲՈՍԱՅԳԻ  
ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ  
ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում Դիանա Աբգարի անվամբ զբոսայգի անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Գ. ԵՐԻՑՅԱՆ  
Գ. ՄԵԼՔՈՍ ՄԵԼՔՈՍՅԱՆ**